



ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

05.09.2019թ. | Ժամը 15:20-18:00 | ՀՀ կառավարության նիստերի դահլիճ

Մասնակիցներ՝ Բազմաշահառու խմբի անդամներ

Նախագահող՝ Տիգրան Ավինյան	Փոխվարչապետ
Իրինա Ղափլանյան	Շրջակա միջավայրի նախարարի առաջին տեղակալ
Կարեն Իսախանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Լիլիա Շուշանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ (այլընտրանքային անդամ)
Պերճ Խաչատրյան	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
Արթուր Համբարձումյան	«Հասարակական ծայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ

Անդրանիկ Աղաբալյան

«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
(այլընտրանքային անդամ)

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

Լուսինե Թովմասյան

քարտուղարության ղեկավար

Անահիտ Առուստամյան

քարտուղարության փորձագետ

Սաթենիկ Հովհաննիսյան

հասարակայնության հետ կապերի փորձագետ

Հյուրեր՝

Նարինե Թադևոսյան

Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում

Գոռ Խաչատրյան

Գերմանիային միջազգային համագործակցության
ընկերություն

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Դավիթ Անանյան

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Սրբուհի Գալյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Արթուր Նիկողոսյան

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի
ադմինիստրատիվ տնօրեն

Արմեն Ստեփանյան

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով
փոխնախագահ

Արամ Օսիկյան

«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային
անդամ)

Մանվել Եղիազարյան

«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ
(այլընտրանքային անդամ)

Դավիթ Թադևոսյան

«Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
(այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝

Անահիտ Առուստամյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Փոխվարչապետ, ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ **Տ.Ավինյանը** ողջունեց նիստի մասնակիցներին և շնորհավորեց ԲՇԽ-ի անդամներին հունիսի 18-19-ը Փարիզում կայացած EITI-ի համաշխարհային համաժողովի ժամանակ նախագահության կողմից մեր երկրին շնորհված մրցանակի կապակցությամբ՝ հավելելով, որ 52 անդամ-երկրների մեջ նման գնահատանքի արժանանալը մեծ

ծեղքբերում և, միաժամանակ, հավելյալ պատասխանատվություն է Հայաստանի ԱՃԹՆ-ի համար:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը և Արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը պաշտոնապես ներկայացվեցին որպես բազմաշահառու խմբում կառավարությանը ներկայացնող անդամներ: ԲՇԽ-ի նախագահը նշեց, որ այս նշանակումներով կառավարությունն ապահովում է EITI-ի ստանդարտի նոր պահանջի կատարումը՝ քաջալերել բազմաշահառու խմբում գենդերային հավասար ներկայացվածությունը:

Նշվեց, որ սեպտեմբերի 9-ից մեկնարկում է Հայաստանի EITI-ի առաջին միջազգային վավերացումը, որի արդյունքում կտրվի նախորդ 3 տարիներին Հայաստանում նախաձեռնության պահանջների իրականացման գնահատականը: Հայաստանի Հանրապետությունը նոյեմբերի 4-8-ը կընդունի EITI-ի վավերացման առաքելությանը: Այդ օրերին անկախ վավերացնողները հանդիպումներ կունենան ինչպես բազմաշահառու խմբի, այնպես էլ առանձին խմբակցությունների ներկայացուցիչների, խմբակցությունից դուրս՝ ոլորտի լիազոր պետական մարմինների, շահառու փորձագետների, քաղաքացիական հասարակության և մեդիա դաշտի ներկայացուցիչների հետ, կաշխատեն EITI-ի զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի հետ: ԲՇԽ-ի նախագահը կարծիք հայտնեց, որ ակնկալում է, որ վավերացման արդյունքում Հայաստանին կտրվի արժանի գնահատական, և, անկախ վավերացման գործընթացից, բազմաշահառու խմբի բոլոր խմբակցություններն առաջիկայում ևս կշարունակեն բարձր պատրաստակամությամբ և առաջանցիկ տեմպերով իրականացնել EITI-ը, որի վերջնական նպատակը ոլորտի թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացումն ու լավ կառավարման գործելակերպի ներդրումն ու ամրապնդումն է:

ԲՇԽ-ի նախագահը **հայտնեց**, որ ներկայումս ակտիվ կերպով ընթանում են իրական սեփականատերերի բացահայտման համակարգի ստեղծման աշխատանքները: Մասնավորապես, EITI-ի՝ իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբը մեր գործընկեր GIZ-ի աջակցությամբ ներգրավված խորհրդատուի մասնակցությամբ կատարում է իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները:

Ընդգծվեց նաև, որ, ի դեմս EITI-ի բազմաշահառու խմբի, ձևավորվել է մի հարթակ, որի նպատակը իրազեկ հանրային բանավեճի իրականացումն ու բոլոր կողմերի համար ընդունելի որոշումների կայացումն է: Սա հաշվի առնելով՝

կարևոր է ՀՀ կառավարության կողմից ոլորտի քաղաքականության և իրավական ակտերի մշակման գործընթացում խմբի ակտիվ ներգրավվածության ապահովումը, որը նախևառաջ պետք է իրականացվի կառավարության ներկայացուցիչ-անդամների նախաձեռնությամբ:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումն **առաջարկվեց** Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանի թեկնածությունը որպես ԲՇԽ-ի կառավարության խմբակցության այլընտրանքային անդամ: **Առաջարկությունն** ընդունվեց ԲՇԽ-ի համապատասխան խմբակցության կողմից:

Օրակարգային հարցերը

1. ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների, 2018 թվականի տարեկան հաշվետվության լրացումների հաստատում (չքննարկվող)

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունը և 2018 թվականի ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվության լրամշակված տարբերակը, որտեղ հաշվի են առնված ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված առաջարկությունները:

2. Ընթացիկ աշխատանքների ներկայացում

ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթաց. Հայաստանի առաջին վավերացման ժամանակացույցի ներկայացում և վավերացումն իրականացնողների այցից առաջ առանձին խմբակցությունների հետ հանդիպումների կազմակերպման և այլ հարցերի քննարկում

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից ներկայացվեց վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը և վավերացման առաքելության նախնական օրակարգը: Տեղեկացվեց, որ վավերացման առաքելության օրերին կկազմակերպվի ԲՇԽ-ի նիստ, վավերացնողները նաև հանդիպումներ կունենան բոլոր խմբակցությունների հետ առանձին, այդ թվում քաղաքացիական հասարակության խմբակցության հետ հանդիպումը անցնելու է առանց ազգային քարտուղարության ուղեկցության: Ազգային քարտուղարությունը առաջարկեց նախքան վավերացման առաքելության մեկնարկը առանձին աշխատանքային հանդիպումներ կազմակերպել ԲՇԽ-ի 3 խմբակցությունների հետ: **Առաջարկությունը ընդունվեց** ԲՇԽ-ի կողմից:

Տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրություն

Ներկայացվեց, որ տրվել է տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության (mainstreaming-ի) ուսումնասիրության կազմման մեկնարկը: Քարտուղարությունը հանդիպել է ուսումնասիրությունը կատարող փորձագետի հետ, որի ժամանակ հաստատվել է աշխատանքների կատարման ժամանակացույցը: Ուսումնասիրության իրականացման ընթացում փորձագետը հանդիպումներ կունենա հանքարդյունաբերության ոլորտի տվյալներ տիրապետող բոլոր պետական մարմինների պատասխանատուների հետ: Ուսումնասիրության արդյունքում կկազմվի ԱՃԹՆ-ի բացահայտումներն արմատավորելու ճանապարհային քարտեզ և ԱՃԹՆ-ի ապագա ներդրման գործընթացի գործողությունների ծրագիր, որը պետք է ներառի անհրաժեշտ գործողությունները, պատասխանատուներին, ժամկետները, ռեսուրսների և փորձագիտական օժանդակության կարիքները: Ուսումնասիրության կազմման աշխատանքներն իրականացվում են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագիրը Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Հանրային վարչարարության բարեփոխումներ Արևելյան գործընկերության երկրներում» նախաձեռնությամբ:

ԱՃԹՆ-ի նոր ստանդարտի շրջանակում առաջարկվող միջազգային ծրագրեր

«Խթանելով Գենդերային հավասար ներկայացվածությունը ԱՃԹՆ-ի գործընթացում» ծրագրի առաջարկ.

2019թ. ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է, որ ԲՇԽ-ն իր ներկայացվածության մեջ հաշվի առնի գենդերային հավասարակշռությունը և զբաղվածության վերաբերյալ տվյալները բացահայտեն ընկերության, գենդերային և մասնագիտական մակարդակով: Ինչպես նաև խրախուսվում է ներկայացնել ոլորտում գենդերային նկատառումներն ու սոցիալական ներգրավվածությունը:

GIZ-ի հետ համագործակցության շրջանակում ներկայացվել է ծրագրի իրականացման առաջարկ, որի հիմնական բաղադրիչներն են.

1. Գենդերային հարցերը ԲՇԽ-ում, հանապատասխան դասընթացի անցկացում:

2. Գենդերային հարցերի դիտարկումը ընկերությունների սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համատեքստում. նպատակն է ուսումնասիրել, թե ընկերությունների կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական ծրագրերը ինչ ազդեցություն ունեն տարբեր սոցիալական խմբերի վրա, ինչ հավելյալ զբաղվածության հնարավորություններ են ստեղծում

ազդակիր համայնքներում: Աշխատաքները նախատեսվում է իրականացնել Հայաստանի 2-րդ զեկույցի կազմմանը զուգահեռ:

3. Գենդերային և սոցիալական ներգարվածության խնդիրների դիտարկումը տեղական գնումների (ծառայությունների և ապրանքների ձեռքբերում) շրջանակում: Արդյունքում կմշակվի համապարփակ հաշվետվությունների կազմման ուղեցույց, որը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի ընթացքում:

Քարտուղարությունը **տեղեկացրեց**, որ Ուկրաինայի ԱՃԹՆ-ի կողմից ներկայացվելու է Համաշխարհային բանկի աջակցությամբ ԱՃԹՆ-ն իրականացնող մի շարք երկրների փորձի փոխանակման ծրագրի առաջարկ, որը քննարկվելու է հոկտեմբերին Ադիս Աբեբայում կայանալիք ԱՃԹՆ-ի խորհրդի նիստի ժամանակ: Առաջարկվող ծրագրի մասնակից երկրներն են Ուկրաինան, Հայաստանը, Ալբանիա և երկրներ, որոնք ցանկանում են միանալ ԱՃԹՆ-ին, մասնավորապես Թունիսը, Լիբանանը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կազմակերպել մի շարք հանդիպումներ, փորձի փոխանակման աշխատաժողովներ ծրագրի մասնակից երկրների մասնակցությամբ իրական սեփականատերերի բացահայտման, պայմանագրերի հրապարակման, քաղաքացիական հասարակության մասնակցության հզորացման, ԱՃԹՆ-ի նոր պահանջների ներդրման թեմաներով: Ծրագրի նախատեսվող ժամկետներն են 2020թ. հունիսից 2021թ. հունիսը:

ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման աշխատանքների մրցույթի ընթացք

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կառավարության խմբակցության (ԿԽ) կողմից ներկայացվեց Հայաստանի ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի ընտրության ընթացքը: ԲՇԽ-ն **որոշեց** ամրագրել սկզբունք, ըստ որի նախընտրելի է, որ երրորդ տարին անընդմեջ զեկույցը չկազմվի նույն ընկերության կողմից, կամ նախորդող 2 տարիներին անընդմեջ զեկույցի կազմման փորձը չի դիտվի որպես առավելություն:

3. Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի փոփոխությունների ներկայացում և աշխատակարգի հաստատում

Քարտուղարության կողմից **ներկայացվեց** ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգում առաջարկվող փոփոխությունները, մասնավորապես, քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից առաջարկված փոփոխությունը, ըստ որի առաջարկվում է ճշգրտում մտցնել աշխատակարգի՝

ԲՇԽ-ի անդամների լիազորությունների ժամկետի հաշվարկմանը վերաբերող դրույթներում: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ *ԲՇԽ-ի անդամները և այլընտրանքային անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով: ԲՇԽ-ի անդամի լիազորությունների ժամկետը հաշվարկվում է սկսած համապատասխան խմբակցության կողմից նրան որպես ԲՇԽ-ի անդամ կամ այլընտրանքային անդամ առաջադրելու օրվանից: 3 տարին հաշվարկվում է անդամի՝ անկախ հաջորդականությունից առանց ընդմիջման ԲՇԽ-ի անդամ և այլընտրանքային անդամ լինելու ժամկետների գումարով: Համապատասխան խմբակցությունների կողմից ԲՇԽ-ի անդամին (անդամներին) կամ այլընտրանքային անդամին (անդամներին) առաջադրելուց հետո Հայաստանի Հանրապետության ԱԾԹՆ ԲՇԽ-ի անհատական կազմը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:* Փոփոխության անհրաժեշտությունը բխում է նրանից, որ սովորաբար խմբակցությունների կողմից ԲՇԽ-ի անդամների առաջադրման և ՀՀ վարչապետի որոշման ընդունման ժամկետները չեն համընկնում, իսկ հանաձայն ԱԾԹՆ-ի ստանդարտի 1.4.ii պահանջի բազմաշահառու խմբի խմբակցություններն անկախ կարգով ընտրում և առաջադրում են իրենց խմբակցության անդամներին, որից հետո առաջադրված անդամները հանդիսանում են ԲՇԽ-ի անդամներ (կամ այլընտրանքային անդամներ): Քարտուղարությունը ներկայացրեց, որ ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից ներկայացված փոփոխությունների վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել, փոփոխությունները տրամադրվել են ԱԾԹՆ-ի միջազգային քարտուղարությանը և միջազգային քարտուղարությունից ստացվել է կարծիք, որ փոփոխությունները բավարարում են ԱԾԹՆ-ի ստանդարտի պահանջներին: Առաջարկվող հաջորդ փոփոխությունը վերաբերում է նիստի արձանագրության մեջ նիստի ժամանակ արտահայտված կարծիքները (առաջարկները, դիտողությունները, ելույթները)՝ ըստ խմբակցությունների ներկայացնելուն: Բացառություններ կարող են կատարվել մասնակիցների խնդրանքով: Նշվեց նաև, որ փոփոխությունները կտարածվեն ընդունումից հետո ծագած հարաբերությունների վրա: ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության (ՔՀԽ) անդամը **հայտարարեց**, որ գործող աշխատակարգում չի տեսնում հակասություն ԱԾԹՆ-ի ստանդարտի հետ և որ ներկայացրել է առարկություններ առաջարկվող փոփոխության վերաբերյալ, ըստ որի ներկայացված փոփոխությունը չի համապատասխանում իրավական ակտերի կազմման կանոններին: ԲՇԽ-ի նախագահը **ամփոփեց** քննարկումը՝ ներկայացնելով, որ ԲՇԽ-ի բոլոր 3 խմբակցությունները, բացառությամբ ՔՀԽ-ի մեկ անդամի կողմ են առաջարկվող փոփոխություններին, և համաձայն աշխատակարգով սահմանված կարգի՝ փոփոխությունները համարվում են ընդունված:

ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպության խմբակցության (ԱԿԽ) անդամը **առաջարկեց**, որ չնայած աշխատակարգից բխում է, որ ԲՇԽ-ի անդամը կարող է վերընտրվել, սակայն աշխատակարգում պետք է հստակ ամրագրել, որ մեկ անգամ 3 տարով անդամ լինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ որպեսզի ժամկետը լրանալուց հետո ԲՇԽ-ի անդամը վերընտրվի համապատասխան խմբակցության կողմից: Աշխատակարգի դրույթը սահմանում է, որ ԲՇԽ-ի անդամի լիազորության ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ համապատասխան խմբակցությունը ներկայացնում է ԲՇԽ-ի տվյալ անդամին փոխարինող՝ հաջորդ անդամի թեկնածությունը, որը կարող է ընկալվել այնպես, որ ԲՇԽ-ի անդամը պետք է նույն անձով չփոխարինվի: Հաջորդ առաջարկությունը վերաբերում է արտահերթ նիստ գումարելու ժամկետներին: Աշխատակարգը սահմանում է, որ ԲՇԽ-ի որևէ խմբակցության անդամների 2/3-ի պահանջով՝ նախագահը պարտավոր է հրավիրել ԲՇԽ-ի արտահերթ նիստ, սակայն սահմանված չէ ժամկետ: **Առաջարկվեց** սահմանել 1-ամսյա ժամկետ: **Առաջարկվեց** նաև 1-ամսյա ժամկետ սահմանել քվորում չկայանալու դեպքում նույն օրակարգով նիստ հրավիրելու անհրաժեշտության դեպքում:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի առաջարկվող փոփոխությունները և լրացումները:

4. 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի ներկայացում և հաստատում

Ներկայացվեց 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որով առաջակվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն ԲՇԽ-ի տարբեր խմբակցությունների կողմից առաջադրված ոլորտներում, մասնավորապես, մետաղական հանքաքարի կամ խտանյութի վերամշակման (մետաղաձուլություն), ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում՝ ԱՃԹՆ-ի տեսանկյունից դրանց էականությունը պարզելու և ԲՇԽ-ի կողմից այդ ոլորտները ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու վերաբերյալ տեղեկացված որոշման ընդունման համար: Քարտուղարությունը տեղեկացրեց, որ նախնական ուսումնասիրության շրջանակի որոշման վերաբերյալ ԲՇԽ-ն օգոստոսի 27-ին անցկացրել է աշխատանքային հանդիպում, որի ժամանակ քննարկվել են մի շարք հարցեր: Ներկայացվեց, որ մի շարք հարցերի վերաբերյալ ԲՇԽ-ի խմբակցությունների տեսակետները չեն համընկնում:

ԲՇԽ ԱԿԽ-ի անդամը **ներկայացրեց** խմբակցության տեսակետը՝ ըստ որի ձուլարանների գործունեությունը ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների էությունից չի բխում: Փոխարենը կարելի է ավելի խորքային ուսումնասիրություն կատարել հանքային ջրերի և որոշ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում:

Նշվեց, որ ձուլարանների դեպքում ԱՃԹՆ-ի ստանդարտի մի շարք պահանջներ վերաբերելի չեն, օրինակ, թույլտվությունների տրամադրումը, կամ տեխնիկապես հնարավոր չէ ֆինանսական տվյալները ներկայացնել տեղական օգտակար հանածոյի վերամշակման կտրվածքով՝ ի պաասխան ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ ծրագրի մակարդակով տվյալների ներկայացման պահանջի:

ԲՇԽ ՔՀԽ-ի անդամը **նշեց**, որ ձուլարանները հաշվետու դարձնելու հարցը քննարկվում է դեռևս 2017 թվականից, և կարծում է, որ վերամշակման՝ երկրորդային օղակը համարվում է արժեշտային մաս: Բացի այդ, ներկայումս եթե հանքաքարի վերամշակմամբ է զբաղում արդյունահանման թույլտվություն ունեցող իրավաբանական անձը, ապա այն վերամշակման գործունեության մասով համարվում է ԱՃԹՆ-ին հաշվետու: Հանքաքար վերամշակող ընկերությունների գործունեությունը առաջացնում է բավականին մեծ բնապահպանական խնդիրներ, ինչպես նաև էական է դրանց սոցիալ-տնտեսական ազդեցությունը: ՔՀԽ-ն **արտահայտեց** իր դիքորոշումը, որ ձուլարանները պետք է դիտարկել ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակում, անկախ այն հանգամանքից, թե հաշվետու տարվա ընթացքում վերամշակել են տեղական հումք, թե ոչ:

ԲՇԽ ԿԽ-ի անդամը **կարծիք արտահայտեց**, որ վերամշակող գործունեությամբ զբաղվող ընկերությունների դիտարկումը նպատակահարմար է նաև փոխկապակցվածության տեսանկյունից: Առաջարկվել է նախնական ուսումնասիրության մեջ ներկայացնել ոլորտը թույլտվությունների դաշտ բերելու հնարավորությունը կամ նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը:

ԲՇԽ ԿԽ-ի անդամը **ներկայացրեց**, որ անհրաժեշտություն է առաջանալու վերամշակման գործություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների համար տալ գործունեության դասակարգման ձևակերպում: **Առաջարկվեց** նաև վերհանել արժեշտային հաջորդական օղակների դիտարկման նպատակը: Եթե մտահոգությունը վերաբերում է փոխկապակցվածությանը, ապա առկա է հարկային օրենսդրությամբ սահմանված 2 գործիքակազմ՝ տրանսֆերային գնագոյացման կարգավորումները, որոնք 4-ամսյա ժամկետում կիրառվելու են, և անուղղակի եղանակով հարկային պարտավորությունների վերահաշվարկը, եթե ընկերությունները ներկայացրել են խեղաթյուրված հարկային տվյալներ:

ԲՇԽ ԱԿԽ-ի ներկայացուցիչները **առաջարկեցին** վերամշակող ընկերությունները դիտարկելու պարագայում ուսումնասիրել նաև հանքաքարի կամ խտանյութի առք և վաճառքով զբաղվող տեղական ընկերություններին:

ՔՀԿ-ի ներկայացուցիչը **ներկայացրեց**, որ ԱՃԹՆ-ն վերաբերում է բնական պաշարների պատշաճ կառավարման հարցերին, որը չի վերաբերում միայն ֆինանսական հաշվետվողականությունը:

ԲՇԽ ԿԽ-ի անդամը **առաջարկեց** տեխնիկական առաջադրանքից հանել ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտը, քանի որ, դիտարկելով ոլորտից պետության ստացած եկամուտները, կարելի է եզրակացնել, որ ոլորտը էական չէ այն ԱՃԹՆ-ի հաշվետու ոլորտ դարձնելու տեսանկյունից: Խնդիրը պետք է դիտարկել նաև ոլորում գործունեություն ծավալող ընկերությունների վարչարարության ծանրաբեռնվածությունը անհարկի չավելացնելու տեսանկյունից:

ԲՇԽ ԿԽ-ի կողմից նաև **կարծիք ներկայացվեց**, որ չնայած ոլորտի ֆինանսական էականությունը փոքր է, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտը առաջացնում է բավականին մեծ բնապահպանական բացասական ազդեցություն, հակապես օդի աղտոտվածության տեսանկյունից, հետևաբար, կարևոր է ուսումնասիրել ոլորտը՝ ստեղծված արժեք և վնաս հարաբերակցության առումով, սակայն ոչ նախնական ուսումնասիրության շրջանակում:

Հաշվի առնելով նաև ֆինանսական միջոցների սահմանափակ լինելու հանգամանքը՝ ԲՇԽ-ն **որոշում կայացրեց** առաջիկա նախնական ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման, (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտները, իսկ հաջորդ տարի դիտարկել ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտը: ԲՇԽ ԱԿԽ-ի անդամի կողմից **ներկայացվեց առաջարկություն** նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքում կատարել հապապատասխան փոփոխություններ՝ համաձայն նիստի քննարկումների և ԲՇԽ-ի որոշումների: Քարտուղարությունը **տեղեկացրեց**, որ ԲՇԽ-ին կներկայացվի տեխնիկական առաջադրանքի լրամշակված տարբերակը, որը կհաստվի էլեկտրոնային եղանակով:

5. «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթի ներկայացում և հաստատում

ԲՇԽ ԿԽ-ի անդամ, պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի ղեկավարի կողմից **ներկայացվեց** «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթի նախագիծը:

ԲՇԽ ԿԽ-ի այլ ներկայացուցչի կողմից **առաջարկվեց** խմբագրել փաստաթղթի 3-րդ գլխի՝ պատասխանատու հանքարդյունաբերության հիմնական ուղղություններից «Գործարար միջավայրի բարեվարքություն» ուղղության մեջ ներառված 2.9 կետը՝ «Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հետևանքով երրորդ անձանց կյանքին և (կամ) գույքին պատճառված վնասի համար նրանց նկատմամբ պատասխանատվության և վնասի փոխհատուցման ապահովագրության քաղաքականության մշակման և ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն»՝ հանելով «երրորդ անձանց կյանքին և (կամ) գույքին պատճառված վնասի համար նրանց նկատմամբ պատասխանատվության և վնասի փոխհատուցման» բառերը, քանի որ այդպիսի ձևակերպումը հստակ մեխանիզմ է ենթադրում, կոնկրետ ուսումնասիրություն իրականացնելու հարց, ինչը հայեցակարգային մոտեցում չէ, այլ ենթադրում է քաղաքականություն, ռազմավարության մշակման հարց:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատեց հայեցակարգը՝ պայմանով, որ կկատարվի համապատասխան լրամշակում՝ տվյալ կետը խմբագրելով այնպես, որ չսահմանափակվի ու չպարտադրվեն ապահովագրության կոնկրետ այդ տեսակները և տրվեց հետևյալ ընդհանուր ձևակերպումը՝ «Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության ոլորտում ապահովագրական մեխանիզմների ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն»:

6. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերի ներկայացում

ԲՇԽ ԿԽ-ի անդամը **ներկայացրեց** մշակված իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերը՝ «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծը և «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա

տվյալների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նշվեց, որ ՀՀ ԱՃԹՆ-ի իրական սեփականատերերի բացահայտման հարցերով զբաղվող աշխատանքային խումբը հստակ մոտեցում է որդեգրել, որ հրապարակային պետք է լինեն ՀՀ օրենքստորությանը չհակասող բոլոր տվյալները: **Տեղեկացվեց**, որ «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը՝ կարծիքի տրամադրման նպատակով, որը հաշվի է առնվել վերջնական նախագիծը կազմելիս:

Նշվեց, որ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով հյատարարագրում լրացվելու են ընկերության մասին տվյալներ, տվյալ ընկերության յուրաքանչյուր իրական սեփականատիրոջ մասին տվյալներ, իրենց փոխկապակցված անձանց մասին տեղեկատվություն: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին 2019 թվականի ապրիլի 23-ի ՀՕ-25-Ն օրենքը հնարավորություն է տալիս ոչ միայն սահմանել փոխապակցվածությունը, այլև տվյալ ընկերությունն ինչ ընկերությունների հետ, որ անձանց հետ է փոխկապակցված՝ բացահայտելով նոր փոխկապակցվածություններ: Հայտարարագրում նաև հարցադրում է ներառվել իրավաբանական անձի՝ համապատասխանաբար պետական, համայնքային մասնակցությամբ կամ միջազգային կազմակերպություն լինելու պարագայում՝ մասնակցության չափը և հսկողության մակարդակը նշելիս որոշակիություն մտցնելու համար:

Քարտուղարության կողմից **առաջարկվեց** հստակություն մտցնել երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքների հայցած, սակայն դիմումները մերժված ընկերությունների հետ կապված, քանի որ տվյալ իրավունքները ստանալու նպատակով դիմումին կից տվյալ ընկերությունները ներկայացնում են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ, այսինքն՝ նրանք ունեն իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագիր լրացնելու պարտավորություն, սակայն համապատասխան իրավունք չստանալու դեպքում տեղեկատվությունը շարունակում է մնալ

պետական ռեգիստրի բազայում, և որոշ ժամանակ հետո դառնում է ոչ արդիական:

Առաջարկվեց ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքով պետական ռեգիստրում նշում կատարել պահի դրությամբ ընկերության՝ «իրական սեփականատերերի բացահայտող չհամարվող լինելու վերաբերյալ:

ԲՀԽ ԿԽ-ի անդամի կողմից **ներկայացվեց**, որ իրավական ակտում բաց է թողնված հայտարարագիրը և հայտարարագրին կցվող սեփականության իրավունքը հավաստող հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված փաստաթղթերը էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակով ներկայացնելու հարցը:

ԲՀԽ ԱԿԽ-ի անդամի կողմից **նշվեց**, որ հյուպատոսական վավերացումն առցանց տարբերակով ստուգելն անհնար է, ինչպես նաև օժանդակ փաստաթղթերը առցանց ներկայացնելը կծանրաբեռնի համակարգը: **Առաջարկվեց** վարչարարությունը թեթևացնելու նպատակով ընկերությունների կողմից հայտարարագրերը և կից փաստաթղթերը ներկայացնելու և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ստուգելու համար ՀՀ արդարադատության նախարարության կողմից սահմանվեն վարչարարության հստակ ժամկետներ: Առաջարկվեց նաև, որպեսզի սահմանված ժամկետում ընկերությունների կողմից լրացվեն փաստաթղթերի և՛ էլեկտրոնային, և՛ թղթային տարբերակները՝ դրանով նաև դնելով սխալանքի պատասխանատվությունը ընկերությունների վրա, իսկ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը ստուգելու համար սահմանված ժամկետներում բնօրինակը էլեկտրոնային տարբերակի հետ համեմատելուց հետո նոր միայն կկատարի ներկայացված տվյալների հաստատումը կամ մուտքագրումը համակարգ: **Նշվեց նաև**, որ անհրաժեշտ է սահմանել տվյալները ներկայացնելու և հավաստելու համապատասխան ժամկետներ՝ ելնելով պարզաբանումների անհրաժեշտությունից:

Առաջարկվեց, հաշվի առնելով, որ մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը տեսականորեն հնարավոր չէ ունենալ ծրագրային ապահովումը էլեկտրոնային եղանակով հայտարարագիրը լրացնելու և առցանց հասանելիությունը ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարելու նախագիծ ներկայացնել՝ ընդերքօգտագործողներն իրական սեփականատերերի վերաբերյալ առաջին հայտարարագիրը ներկայացնելու վերջնաժամկետը 2019 թվականի նոյեմբերի 30-ից տեղափոխելով մինչև 2020 թվականի հունվարի 30-ը:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **ընդունեց** վերոնշյալ փոփոխության առաջարկը:

Որոշվեց ներկայացված կարծիքներն ամփոփելուց հետո փաստաթղթերի շուրջ կազմակերպել իրական սեփականատերերի բացահայտման հարցերով զբաղվող աշխատանքային խմբի վերջնական հանդիպում, որի ժամանակ վերջնական լուծում ստանալու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության և Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ներկայացուցիչների մասնակցությամբ կքննարկվեն նիստին բարձրացված հարցերը:

Տեղեկացվեց նաև, որ իրական սեփականատերերի բացահայտման վերջնական ենթաօրենսդրական ակտերը կարծիքի կներկայացվեն նաև ՀՀ ԱԺ խմբակցություններին:

7. ՀՀ ԱԾԹՆ-ի 2018թ. ազգայի զեկույցի բացահայտումներին առնչվող հարցեր

- **Որոշվեց** նիստի օրակարգում ներառված հիմնադրամների պատշաճ հաշվետվողականության թափանցիկության բարձրացման հարցի քննարկումը տեղափոխել հաջորդ նիստ, քանի որ տվյալ պահին համապատասխան օրենսդրական փաթեթ է շրջանառվում:

- ԲՇԽ ԿԽ-ի անդամի կողմից **տեղեկացվեց**, որ նախաձեռնվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքում կատարել փոփոխություններ՝ ըստ որի չեն առանձնացվի կոնկրետ մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններ, որոնց կողմից վճարված բնապահպանական հարկից են մասհանումներ կատարվում նպատակային բնապահպանական ծրագրերի իրականացման համար, այլ օրենքում կսահմանվի «մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններ» ձևակերպումը: **Տեղեկացվեց նաև**, որ վերոնշյալ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը ընդունվելուց հետո կընդունվի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրաման, համաձայն որի սուբվենցիա ստացած ազդակիր ազդակիր համայնքները այս մասով պետք է առանձին հաշվետվություն ներկայացնեն:

- **Տեղեկացվեց**, որ ի պատասխան փոխվարչապետ Տիգրան Ավինյանի 2019 թվականի մարտի 27-ի հանձնարարականի՝ չգրանցված անշարժ գույքի՝ ըստ ընկերությունների և համայնքների, տեղեկանք ներկայացնելու վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ներկայացրել է այն համայնքների ցանկը, որտեղ համապատասխան խնդիր է

հայտնաբերվել, և հանձնարարական է ուղարկվել ՀՀ բնապահպանության և ընդերքի, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հիդեհային անվտանգության տեսչական մարմիններին՝ վերլուծություն կատարելու և մինչև ս.թ. սեպտեմբերի 16-ը խնդրի լուծման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

8. Հանքարդյունաբերության ոլորտի ներկա վիճակը. քաղ. հասարակության կողմից առաջարկվող սկզբունքները

Որոշվեց ԲՇԽ ԲՀԽ-ի կողմից ներկայացված հարցը քննարկել աշխատանքային հանդիպման շրջանակում:

9. Այլ հարցեր

ԲՇԽ ԲՀԽ-ի անդամի կողմից **ներկայացվեց**, որ ԱՃԹՆ-ի ԲՀԽ-ն նախատեսում է սեպտեմբերի 20-25-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել հանրային բանավեճեր ԲՇԽ-ի անդամների և շահագրգիռ կողմերի միջև: Նախօրոք հավաքվել են տարբեր առաջարկություններ 6 խոշոր հանքարդյունահանող ընկերությունների ազդակիր համայնքների 14 բնակավայրերի բնակչությունից:

Որոշվեց միջոցառումը անցկացնել հոկտեմբերին, որպեսզի հնարավոր լինի ապահովել ԲՇԽ-ի անդամների ներկայությունը:

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից **առաջարկվեց** Շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության կողմից www.e-draft.am կայքում տեղադրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ բոլոր հանրային քննարկումների մասին տեղեկացնել ԲՇԽ-ի անդամներին: